նան ներսէն, մինչեւ որ այս աղէտին առթիւ ժամին զանգակները կը ղօղանջեն, ոստիկանութիւնը կը փութայ ու կը ցրուէ ցուցարար խումբը: Տպարանին բանուորները կ'առնուին օտար տպարաններ աշխատելու: Ամիսէ մը վերաբացուած, շնորհիւ քաղաքին մէջ շրջագայող թռուցիկներու՝ ուր պարզուած էին Մխիթարեանց իրաւունքն ու նպատակը: 1889էն սկսելով Վիէննականք ոյժ տուած են օտար հրատարակութեանց ճիւղին — իբր առատ շահու աղբիւր — և տպած են ցարդ **2000** հատոր, մինչ հայերէն գիրքերու թիւը մէկ չորրորդն է այս գումարին: — Լատին պաշտամանց մատեաններու տպագրութենէն զատ (Ա. Արբահօր-օրով), Միաբանութիւնը 1849էն պատուաբեր յանձնարարութիւնն առած է կառավարութենէն՝ հունգարական թղթադրամ ալ դրոշմելու: — Այսպէս, **Մխիթարեան բազմալեզուեան Տպարանը** ներկայիս մէջ տիպար կերպով կատարելագործուած՝ տարիներէ ի վեր բոլորած է ահագին գործունէութիւն Գիմնազիոններու դասագրեանց, գիրքերու և պատկերազարդ պարբերականներու տպագրանքներով: — Աւելցունենք թէ տպարանին բարելաւման գործին վերջին առեններս հոգ տարած են Գալէմքեարեան, Արիկեան և Թիրոյեան Հարք: — Հայր Մէնէվիշեան բարեհաճութիւնն ունեցաւ մեզ դրկելու 7 շքեղ տեսարան՝ իրենց վիթխարի գործատունին մասերէն, որոնցմէ մին գետեղած ենք անա: Այդ պատկերներուն ստորեւ արձանագրուածներէն խելամտեցանք թէ 1. Բուն տպարանը կը գտնուի գետնայարկ սրահ մը կամարակապ՝ 7 ելեկտրաշարժ մեքենաներով, իւրաքանչիւր կամարին տակ մամուլ մը, (3 հատը մեծ, անձնիւրը մինչեւ 23000 ֆր. արժողութեամբ): Այդ սրահին տարածութիւնն է 28,80 մեթր երկայնք և 7,20 լայնք: **2.** Առաջին Դստիկոն (ներքին սրահ), 16,60 մեթր երկայնք, 7,20 լայնք, յատկացուած կազմատան և ելեկտրաշարժ ծալլող ու թելակապ մեքենաներու: — **3.** Նոյն Դստիկոն (արտաքին սրահ), 12 մեթր երկայնք և 7,20 լայնք, որ 2 ամերիկեան ոտնակաւոր մամուլ կը պարունակէ: **4-5.** Երրորդ Դստիկոն, երկրորդ թեւին վրայ (հաշուակալութեան գրասենեակներ): **6-7.** Առաջին և երկրորդ Դստիկոն, 28,80 մեթր երկայնք և 7,20 լայնք (2 ընդարձակ սրահներ, Գրաշարատուն):

** Իրենց տպարանէն ելած 500է աւելի հայերէն գիրքերու վերջին ցուցակ մը 1908ին հրատարակուած ըլլալով՝ խիստ կարեւորներէն փունջ մը կը ներկայացունենք հոս. — Ագաթանգեղոս առ. Գէորգայ Ասորի Եպիսկոպոսին, Ակնարկ մը Հայ Հնագրութեան վրայ, Ամառնային ուղեւորութիւնից դէպ ի Հայս, Ատլաս, Արդի լեզուագիտութիւնը, Գերմ.-Հայ. բառարան, Յուն. Իտալ. Հայ. Տաճկ., Գրիգոր Մագիստրոսի «Դամագտականի» ամբողջական լուծումը, Խօսք վասն տիեզերական պատմութեան, Դասաւորութիւն Ռուբինեան Դրամոց, Դրանսիլուանիոյ Հայոց Մետրապոլիսը, Էջմիածնի Աւետարանը, Իրաւախոհի կեղծիք և իրաց ճշմարտութիւնք, Ծովք, Կոլոտ Յովհաննէս Պատր., Հայ Բդեաշխք, Հայ գիւղական տունը, Հայերէն բարբառախօսութիւն, Հայերէն և դրացի լեզուները, Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, Հայք յԵղիսաբեթուպոլիս, Հանգամանք Հաւատոյ, Հեթանոս Հայաստանի 8 մեհեանները, Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի, Հին Հայոց տեղւոյ անունները, Մայր ցուցակ հայ. ձեռագրաց, Մանր ուսումնասիրութիւնք, Ուսումնասիրութիւնք Սուտ-Կալիսթենեայ Վարուց Աղեքս., Պատմութիւն Հայ Լրագրութեան, Պատմ. Մատենագրութեան Հայոց, Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները, Սրբազան Պատարագամատոյցք Հայոց, Վարդապետութիւն Առաքելոց անվաւերական կանոնաց մատեանը, Տիեզերական պատմութիւն, Տօմար ընտանեկան, **Քննական Քերականութիւն արդի հայերէն լեզուի**, Քննութիւն Գրոց Դաւթի, ևն. ևն. ևն.: — Իսկ տպագրութիւնը 1900ին սկսուած և հեղինակին տկարութեանը պատճառաւ ընդհատուած գլուխ-գործոց երկասիրութիւն մըն է Հ. Յակովբոս Վ.րդ. Տաշեանի **Ուսումն Դասական Հայերէն Լեզուին**: Մեծադիր 44 «փոռմա» տպուած է ցարդ: Գրաբար շարադրուած այս գիրքը **Հայկաբանութիւն** է լիակատար: Ամբողջութիւնը պիտի կազմէ 3 հատոր՝ իւրաքանչիւրը շուրջ 1000 էջնոց:

** Առհասարակ Վիէննա տպուած հայատառ տաճկերէն գիրքեր ՊԷՉՏԷ (՝ի Պէչ) բառը կը կրեն իրենց վրայ: ՊԷՉ մաճառերէնն է ՎԻԷՆՆԱՅԻ: Աւելորդ կը սեպենք առանցմէ ալ քաղ մը ընել՝ ամբողջութեամբ կրօնական ըլլալնուն և վերոյիշեալ ցուցակին մէջ արդէն գտնուելնուն համար: ☞ Ռուսահայ պատմաբան-հրապարակագիր Լէօ, չգիտցուիր ի՛նչ հայեցակէտով, վերջին ծայր ժլատ վարուած է՝ այս Միաբանութեան կատարած բազմաբեղուն գործունէութեան համար յատկացունելով ա՛յնքան աննշան տեղ՝ իր նոր երկին մէջ: